ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

--- օգոստոսի 2024 թվականի №---

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՄԱՍՆԱԿԻՈՐԵՆ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) 2024 թվականի ապրիլի 12-ի №1109919 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է դիմել Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Մինաս Ավետիսյան 4-րդ փողոցի 4-րդ շենքի №36 բնակարանի բնակիչ Գայանե Պողոսյանը (այսուհետ՝ Դիմումատու 1) և հայտնել, որ 2024 թվականի մարտի 19-ին՝ ժամը 16:50-ից մինչև 22:45-ն, ընդհատվել է վերոնշյալ շենքի, դրա հարակից շենքերի և սեփական տների էլեկտրամատակարարումը: Վերջինս նշել է, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), 4 ժամից ավելի տևողությամբ էլեկտրամատակարարման ընդհատման պարագայում, սպառողին տույժ չի վճարել,
2) Հանձնաժողովը, Դիմումատու 1-ի կողմից ներկայացված դիմումի առնչությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով, 2024 թվականի ապրիլի 15-ի №ԱՆ/34.4-Մ2-15/1523-2024 գրությամբ դիմել է Ընկերությանը,
3) Ընկերությունը 2024 թվականի ապրիլի 25-ի №Ե-1262-24 գրությամբ հայտնել է, որ Երևան քաղաքի Մինաս Ավետիսյան 4-րդ փողոցի 4-րդ շենքի №36 բնակարանի էլեկտրամատակարարումն ընդհատվել է 2024 թվականի մարտի 20-ին՝ ժամը 00:27-ից մինչև 01:10-ն ընկած ժամկետում: Ընկերությունը հավելել է նաև, որ հիշյալ հասցեում 2024 թվականի մարտի 19-ին էլեկտրամատակարարման վթարային անջատում չի գրանցվել,
4) 2024 թվականի մայիսի 7-ի №ԱՆ/34.4-Մ2-15/1898-2024 գրությամբ Հանձնաժողովը Ընկերության ներկայացրած պարզաբանումները տրամադրել է Դիմումատու 1-ին,

5) Դիմումատու 1-ն իր սույն թվականի մայիսի 8-ի №1133837 գրությամբ կրկին պնդել է, որ 2024 թվականի մարտի 19-ին Երևան քաղաքի Մինաս Ավետիսյան 4-րդ փողոցի 4-րդ շենքի, դրա հարակից շենքերի և սեփական տների էլեկտրամատակարարումն անընդմեջ՝ 6 ժամ տևողությամբ, ընդհատված է եղել, ուստի խնդրել է իրականացնել կրկնակի ուսումնասիրություն սույն թվականի մարտի 19-ին վերոնշյալ հասցեի էլեկտրամատակարարման ընդհատման հետ կապված՝ միաժամանակ տրամադրելով տվյալ օրն իր կողմից իրականացված տեսաձայնագրությունները և տարածքը սպասարկող՝ Ընկերության աշխատակցի հետ հեռախոսազրույցի ձայնագրությունը,

6) Հանձնաժողովը 2024 թվականի մայիսի 13-ի №ԱՆ/34.4-Մ2-15/1999-2024 գրությամբ, համապատասխան պարզաբանումներ ստանալու նպատակով, դիմել է Ընկերությանը՝ կցելով Դիմումատու 1-ի կողմից ներկայացված տեսաձայնագրություններն ու ձայնագրությունը,

7) Ընկերությունն իր 2024 թվականի մայիսի 17-ի №Ե-1605-24 գրությամբ հայտնել է, որ Երևան քաղաքի Մինաս Ավետիսյան 4-րդ փողոցի 4-րդ շենքի №36 բնակարանի էլեկտրամատակարարումը 2024 թվականի մարտի 19-ին՝ ժամը 18:58-ից մինչև 22:47-ն ընկած ժամկետում, ընդհատվել է վթարային անջատման պատճառով, և վթարը վերացնելուց հետո պարզվել է, որ վերոնշյալ շենքի 3-րդ մուտքի մուտքային ավտոմատ անջատիչն անջատված է, որը միացվել է նույն օրը՝ ժամը 23:50-ին: Վերջինս, միաժամանակ, հայտնել է, որ սույն թվականի մարտի 19-ի ընթացքում շատ վթարներ լինելու պատճառով «Արաբկիր» շահագործման շրջանի օպերատիվ կարգավարական ծառայության ավագ կարգավարը շփոթմամբ վթարը ծրագրում արձանագրել է 2024 թվականի մարտի 20-ին՝ ժամը 00:27-ից մինչև 01:10-ը,

8) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2024 թվականի մայիսի 24-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №523-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 135-րդ կետի 2-րդ և 273-րդ կետի 1-ին ենթակետերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի նոյեմբերի 1-ի №79-Ա որոշմամբ հաստատված՝ Ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման թիվ 0092 լիցենզիայի պայմանների (այսուհետ՝ Լիցենզիայի պայմաններ) 37-րդ կետի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է

Հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 24-ի №ԳԲ/43-34.4-Մ2-9/2198-2024 գրությամբ: Նույն գրությամբ Ընկերությունը տեղեկացվել է նաև, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքն ապահովելու նպատակով, անհրաժեշտ է վերը նշված գրությունը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել վարույթում քննարկվող հարցի վերաբերյալ Ընկերության դիրքորոշումը և այն հիմնավորող փաստաթղթերը,

9) հարուցված վարչական վարույթի շրջանակում, Ընկերությունն իր 2024 թվականի հունիսի 3-ի №Ե-1860-24 գրությամբ հաստատել է, որ Երևան քաղաքի Մինաս Ավետիսյան 4-րդ փողոցի 4-րդ շենքի №36 բնակարանի՝ սույն թվականի մարտի 19-ի էլեկտրամատակարարման վթարային ընդհատման վերաբերյալ «Արաբկիր» շահագործման շրջանի պետի կողմից թյուրիմացաբար տրվել էր սխալ տեղեկատվություն, որի արդյունքում Ընկերության տեխնիկական տնօրինությունը ևս սխալ տեղեկատվություն էր ներկայացրել Հանձնաժողով: Ընկերությունը հայտնել է, որ Կանոնների 135-րդ կետով նախատեսված ժամկետի խախտման համար վերոհիշյալ շենքի 3-րդ մուտքի թվով 12 բնակարանների սպառողներին սահմանված կարգով տրվել է տույժ, որը կարտացոլվի վերջիններիս վերաբերող՝ 2024 թվականի մայիս ամսվա վճարային անդորրագրերում: Միաժամանակ, նշվել է, որ հետագայում նմանատիպ դեպքերից խուսափելու համար Ընկերության համապատասխան աշխատակիցների նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժի միջոցներ,

10) 2024 թվականի մայիսի 4-ին Հանձնաժողով է դիմել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 46-րդ շենքի №29 բնակարանի բնակիչ Վահե Ղալթախչյանը (այսուհետ՝ Դիմումատու 2) և հայտնել նշված հասցեի էլեկտրամատակարարման պարբերական ընդհատումների մասին,

11) Հանձնաժողովը, 2024 թվականի մայիսի 7-ի №ԱՆ/34.4-Մ2-15/1908-2024 գրությամբ Դիմումատու 2-ի կողմից 2024 թվականի մայիսի 4-ին Հանձնաժողով ներկայացված դիմումի առնչությամբ անհրաժեշտ պարզաբանումներ ստանալու նպատակով, դիմել է Ընկերությանը,

12) Ընկերությունը 2024 թվականի մայիսի 14-ի №Ե-1551-24 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 46-րդ շենքի էլեկտրամատակարարումն իրականացվում է «Հրազդան» 110 կՎ ենթակայանի բջիջ 27-«Կենտրոն 4» 10 կՎ օդային գծից սնվող S5329 ենթակայանի

0.4 կՎ ցանցից և 2024 թվականի ապրիլի 1-ից մինչև մայիսի 7-ն ընկած ժամանակահատվածում չի ընդհատվել,

13) Հանձնաժողովը սույն թվականի մայիսի 16-ի №ԱՆ/34.4-Մ2-15/2081-2024 գրությամբ Ընկերության ներկայացրած պարզաբանումների մասին տեղեկացրել է Դիմումատու 2-ին,

14) Դիմումատու 2-ն իր 2024 թվականի մայիսի 16-ի գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը Հանձնաժողովին տրամադրել է սխալ տեղեկատվություն՝ պնդելով, որ 2024 թվականի մայիսի 4-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 46-րդ հասցեի էլեկտրամատակարարումն ընդհատվել է,

15) Հանձնաժողովն իր 2024 թվականի մայիսի 20-ի №ԱՆ/34.4-Մ2-13/2132-2024 գրությամբ կրկին դիմել է Ընկերությանը՝ խնդրելով իրականացնել կրկնակի ուսումնասիրություն 2024 թվականի մայիսի 4-ին վերոնշյալ հասցեի սպառողների էլեկտրամատակարարման ընդհատման վերաբերյալ և Հանձնաժողով ներկայացնել անհրաժեշտ պարզաբանումներ,

16) Ընկերությունը սույն թվականի մայիսի 23-ի №Ե-1693-24 գրությամբ դարձյալ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 46-րդ շենքը 2024 թվականի մայիսի 4-ին չի հոսանքազրկվել: Այնուհետև, Ընկերության իրականացրած կրկնակի ուսումնասիրության արդյունքների հիման վրա, վերջինս, ի լրումն, 2024 թվականի հունիսի 7-ի №Ե-1933-24 գրությամբ նշել է, որ էլեկտրական էներգիայի ավտոմատացված հաշվառման և հսկման համակարգի տվյալների համաձայն, 2024 թվականի ապրիլի 1-ից մինչև մայիսի 7-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 46-րդ շենքի №29 բնակարանի էլեկտրամատակարարումն ընդհատվել է 3 անջատումով՝ 2024 թվականի ապրիլի 6-ին՝ ժամը 13:13-ից մինչև 13:55-ը, ապրիլի 16-ին՝ ժամը 05:44-ից մինչև 06:18-ը, և մայիսի 4-ին՝ ժամը 13:18-ից մինչև 14:20-ն ընկած ժամկետում, որոնք, Ընկերության ներկայացմամբ, չեն գերազանցել Կանոնների 135-րդ կետով սահմանված ժամկետը: Վերջինս հավելել է նաև, որ էլեկտրամատակարարման ընդհատումների պատճառները ճշտելու համար իրականացվում են աշխատանքային քննարկումներ,

17) Հանձնաժողովն, իր 2024 թվականի հունիսի 7-ի №ԱՆ/34.4-Մ2-13/2468-2024 գրությամբ, Ընկերության նույն օրվա №Ե-1933-24 գրությամբ տրամադրված տեղեկատվությունը ներկայացրել է Դիմումատու 2-ին,

18) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ 2024 թվականի հուլիսի 9-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Լիցենզիայի պայմանների

37-րդ կետի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 9-ի №ԳԲ/Խ/2993-2024 գրությամբ: Նույն գրությամբ Ընկերությունը տեղեկացվել է նաև, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքն ապահովելու նպատակով, անհրաժեշտ է վերը նշված գրությունը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել վարույթում քննարկվող հարցի վերաբերյալ Ընկերության դիրքորոշումը և այն հիմնավորող փաստաթղթերը: Հանձնաժողովը, միաժամանակ, հայտնել է, որ 2024 թվականի մայիսի 24-ին և հուլիսի 9-ին հարուցված վարչական վարույթների համատեղ իրականացումը կարող է ապահովել ավելի արագ և արդյունավետ լուծում, ուստի, հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասը, նշված վարույթները միացվում են,

19) Ընկերությունը 2024 թվականի հուլիսի 15-ի №Ե-2601-24 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 46-րդ շենքի №29 բնակարանի էլեկտրամատակարարման ընդհատման փաստն ուսումնասիրելու նպատակով նախաձեռնել է առավել մանրակրկիտ ուսումնասիրություն, որի արդյունքում նշված հասցեում էլեկտրամատակարարման ընդհատման փաստը հայտնաբերվել է միայն նշված հասցեի բաժանորդի էլեկտրոնային հաշվառքի սարքի վերծանումից,

20) Հանձնաժողովն իր 2024 թվականի հուլիսի 18-ի №ԳԲ/43-34.4-Մ4-2/3293-2024 գրությամբ Ընկերությունից պահանջել է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Մինաս Ավետիսյան 4-րդ փողոցի 4-րդ շենքի №36 բնակարանի մասով՝ սույն թվականի մարտի 19-ի, իսկ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 46-րդ շենքի №29 բնակարանի մասով՝ սույն թվականի ապրիլի 1-ից մինչև մայիսի 7-ն ընկած ժամանակահատվածի համար ներկայացնել էլեկտրոնային հաշվառքի սարքից վերծանված տվյալները,

21) Ընկերությունը 2024 թվականի հուլիսի 23-ի №Ե-2821-24 գրությամբ Դիմումատու 1-ի կողմից Հանձնաժողով ներկայացված դիմումի մասով վերահաստատել է իր սույն թվականի մայիսի 17-ի №Ե-1605-24 գրությամբ Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Մինաս Ավետիսյան 4-րդ փողոցի 4-րդ շենքի №36 բնակարանի էլեկտրամատակարարումը 2024 թվականի մարտի 19-ին՝ ժամը 18:58-ից մինչև 22:47-ն

ընկած ժամկետում, ընդհատվել է վթարային անջատման՝ բարձր լարման մալուխագծի վնասվածքի պատճառով, և, ևս մեկ անգամ նշել է թյուրիմացաբար վթարը ծրագրում սխալ արձանագրելու մասին: Վերջինս հավելել է նաև, որ նույն օրը, վերոնշյալ շենքի 3-րդ մուտքի մուտքային ավտոմատ անջատիչն անջատված լինելու և դրա արդյունքում՝ հիշյալ մուտքի թվով 12 բնակարանների էլեկտրամատակարարումը 2024 թվականի մարտի 19-ին՝ ժամը 23:50-ին վերականգնվելու պատճառով, խախտվել է Կանոնների 135-րդ կետով սահմանված ժամկետը, ինչով պայմանավորված, վերոհիշյալ շենքի 3-րդ մուտքի թվով 12 բնակարանների սպառողներին վճարվել է Կանոնների 273-րդ կետով սահմանված տույժը: Դիմումատու 2-ի դիմումի մասով Ընկերությունը վերը նշված գրությամբ վերահաստատել է 2024 թվականի հունիսի 7-ի №Ե-1933-24 գրությամբ Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 46-րդ շենքի №29 բնակարանի էլեկտրամատակարարումն ընդհատվել է 2024 թվականի ապրիլի 6-ին՝ ժամը 13:13-ից մինչև 13:55-ը, ապրիլի 16-ին՝ ժամը 05:44-ից մինչև 06:18-ը և մայիսի 4-ին՝ ժամը 13:18-ից մինչև 14:20-ն ընկած ժամկետում: Ընկերությունը հավելել է, որ տվյալ անջատումները հնարավոր է եղել հայտնաբերել միայն լրացուցիչ միջոցառումների իրականացման, մասնավորապես՝ էլեկտրոնային հաշվառքի սարքի վերծանման արդյունքում, իսկ էլեկտրամատակարարման վերականգնման ժամկետները չեն գերազանցել Կանոնների 135-րդ կետով սահմանված ժամկետը: Վերոգրյալի հիմքով՝ նշվել է, որ տվյալ դեպքում Ընկերությունը սպառողների նկատմամբ տույժի վճարման պարտավորություն չունի: Բացի այդ, գրությամբ հիշատակվել է, որ Դիմումատու 2-ը, խնդրո առարկա հասցեի բաժանորդ չի հանդիսանում, և Ընկերության աշխատակիցների և Դիմումատու 2-ի համատեղ քննարկումների արդյունքում, վերջինիս պարզաբանվել են առաջացած տեխնիկական խնդիրների պատճառները, որից հետո Դիմումատու 2-ն իր Բողոքը համարել է բավարարված և այդ մասին գրավոր հայտնել է Ընկերությանը: Վերոգրյալից ելնելով և վկայակոչելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ Ընկերությունը խնդրել է կարճել միացված վարչական վարույթը,

22) Հանձնաժողովն իր 2024 թվականի օգոստոսի 14-ի №ԳԲ/43-34.4-Մ4-2/3808-2024 գրությամբ, լրացուցիչ ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով, Ընկերությունից պահանջել է ներկայացնել էլեկտրոնային հաշվառքի սարքերից վերծանված տվյալները (ըստ անջատման ժամերի և բեռերի)՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 46-րդ

շենքի №3, №4, №27, №28, №29, նույն թաղամասի 44-րդ շենքի №37, №43, №52 բնակարանների մասով՝ սույն թվականի ապրիլի 1-ից մինչև մայիսի 7-ն ընկած ժամանակահատվածի, իսկ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Մինաս Ավետիսյան 4-րդ փողոցի 4-րդ շենքի №3, №6, №10, №33, №35, №36 բնակարանների, նույն փողոցի 4Ա-րդ շենքի №14, №15 բնակարանների մասով՝ սույն թվականի մարտի 19-ի համար: Հանձնաժողովն Ընկերությունից խնդրել է պարզաբանել նաև, թե արդյո՞ք Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 46-րդ շենքի №3, №4, №27, №28, №29, նույն թաղամասի 44-րդ շենքի №37, №43, №52 բնակարանների սպառողների 2024 թվականի մայիսի 4-ի էլեկտրամատակարարման ընդհատումը նույն օրն արձանագրված №904045113 վթարի (որի արդյունքում վնասվել է Հրազդան-1 110/35/10 կՎ ենթակայանի բջիջ 16 Լեռնանիստ ՅԱ անջատիչի 10կՎ մեկուսիչը) հետևանք է, թե՝ առկա են այլ պատճառներ ևս,

23) Ընկերությունն իր 2024 թվականի օգոստոսի 16-ի №Ե-3337-24 գրությամբ ներկայացրել է Հանձնաժողովի սույն թվականի օգոստոսի 14-ի №ԳԲ/43-34.4-Մ4-2/3808-2024 գրությամբ պահանջվող՝ էլեկտրոնային հաշվառքի սարքից վերծանված տեղեկությունները և հավելել, որ Հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 14-ի №ԳԲ/43-34.4-Մ4-2/3808-2024 գրությամբ նշված՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 44-րդ և 46-րդ շենքերի համապատասխան բնակարանների՝ սույն թվականի մայիսի 4-ի էլեկտրամատակարարման ընդհատումը կապված չէ նույն օրն արձանագրված №904045113 վթարի հետ,

24) Կանոնների 135-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ սպառողի էլեկտրամատակարարման վթարային ընդհատման դեպքում բաշխողը այն պարտավոր է վերականգնել ընդհատման պահից ոչ ուշ, քան՝ քաղաքային համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմանում՝ 4 ժամում,

25) Կանոնների 273-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ բաշխողը արտադրողին, սպառողին կամ դիմող անձին վճարում է տույժ՝ էլեկտրամատակարարման պլանային, վթարային ընդհատման և դրա վերականգնման՝ Կանոնների 22-րդ գլխով սահմանված ընթացակարգի կամ ժամկետների յուրաքանչյուր խախտման դեպքում,

26) Կանոնների 275-րդ կետի համաձայն՝ սպառողի դեպքում հաշվարկված տույժը բաշխողը հաշվի է առնում սպառողի ընթացիկ ամսում ծախսած էլեկտրական էներգիայի համար ներկայացվելիք հաշվարկային փաստաթղթում: Հաշվարկված տույժը հաշվարկային փաստաթղթում նշվում է առանձին տողով և նվազեցվում է մատակարարված

էլեկտրական էներգիայի արժեքից, իսկ Մատակարարի Սպառողի դեպքում՝ բաշխման ծառայության արժեքից,

27) Լիցենզիայի պայմանների 37-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար,

28) Լիցենզիայի պայմանների 38-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով ներկայացնել լիցենզավորված գործունեության վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն,

29) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարչական վարույթ կարող է չհարուցել, իսկ հարուցված վարչական վարույթը կարճել, եթե կարգավորվող անձը սպառողին կամ դիմող անձին վճարել է խախտման համար հանձնաժողովի հաստատած կանոններով նախատեսված տույժը,

30) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ միևնույն անձի մասնակցությամբ վարույթների միացման դեպքում տուգանք կիրառելիս կիրառվում է կարգավորվող անձի թույլ տված խախտումների համար նախատեսված տուգանքներից առավել խիստ տուգանքի առավելագույն չափը,

31) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ՝

ա. Ընկերությունը խախտել է Լիցենզիայի պայմանների 37-րդ և 38-րդ կետերի պահանջները՝ 2024 թվականի ապրիլի 25-ի №Ե-1262-24, մայիսի 14-ի №Ե-1551-24 և մայիսի 23-ի №Ե-1693-24 գրություններով Հանձնաժողով ներկայացնելով ոչ հավաստի և ոչ սպառիչ տեղեկություններ՝ արդյունքում զրկելով Հանձնաժողովին Դիմումատու 1-ի և Դիմումատու 2-ի կողմից ներկայացված դիմումների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման հնարավորությունից, ինչն էլ, իր հերթին, խոչընդոտել է կարգավորող մարմնի՝ Հանձնաժողովի կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանը.

բ. Ընկերությունը ընդունել է Կանոնների 135-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջի խախտման փաստը և Կանոնների 273-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն վճարել է տույժը, ինչը «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն վարչական վարույթի կարճման հիմք է: Ընկերության 2024 թվականի հուլիսի 23-ի №Ե-2821-24 գրությամբ մատնանշված՝ Դիմումատու 2-ի՝ բաժանորդ չհանդիսանալու վերաբերյալ փաստարկի առնչությամբ հարկ է նշել, որ նշվածը դուրս է սույն վարույթի շրջանակում պարզման ենթակա հարցերի տիրույթից,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ, 34-րդ և 19-րդ հոդվածների 2-րդ մասերը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Լիցենզիայի պայմանների 37-րդ և 38-րդ կետերի խախտման համար, որով խոչընդոտվել է Հանձնաժողովի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացումը, Ընկերությանը տուգանել 20 000 000 (քսան միլիոն) դրամ գումարի չափով:

2. Ընկերության նկատմամբ 2024 թվականի մայիսի 24-ին հարուցված և հուլիսի 9-ին հարուցված ու միացված վարչական վարույթը, Կանոնների 135-րդ կետի 2-րդ և 273-րդ կետի 1-ին ենթակետերի խախտումների ուսումնասիրության մասով, կարճել:

3. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:

5. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- օգոստոսի 2024թ.